10.56653/18290361-2025.15-207

Գոռ Ղազարյան
Երևանի պետական համալսարան
ghazaryan3329@gmail.com

ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

«Որո՞նք են լինելու վաղուայ Հայաստանի սահմանները։ — Ամոնք, որ պիտի գծեն հայ զինուորի արիութիւնն ու հայրենասիրութիւնը»։

Գարեգին Նժդեհ

Նիրվում է Զորավար Գ. Նժդեհի
հավերժավառ հիշատակին։

Հիմնաբառեր. Լեռնահայաստանի Հանրապետություն, Սյունիք, Զանգեզուր, Արցախ, Վայոց ձոր, Նոր Բայազետ, Գողթան, Գարեգին Նժդեհ։

Ներածություն

Հայաստանի 1-ին Հանրապետության տարիներին (1918 թ. մայիս – 1920 թ. դեկտեմբեր) Զանգեզուրն ապրում էր որոշակի ինքնավար կյանքով՝ հաճախ ստիպված լինելով միայնակ դիմագրավել արտաքին մարտահրավերներին։ 1920 թ. դեկտեմբերին, Հայաստանի հարկադրված խորհրդայնացումից հետո Զանգեզուրը չընդունեց ստեղծված քաղաքական փոփոխությունները՝ դրանք համարելով Քեմալական Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի կողմից Հայաստանի դեմ ուղղված համատեղ ռազմաքաղաքական գործողությունների հետևանք (Վրացեան 1967, 161–162)։ Թուրք-հայկական պատերազմում Հայաստանը ունեցել էր տարածքային մեծ կորուստներ։ Անորոշ էին մնում հայկական երեք երկրամասերի՝ Արցախի, Սյունիքի և Նախիջևանի ճակատագրերը (Նժդեհ 2002, 10–11)։ Ստեղծված ռազմաքաղաքական բարդ իրավիճակում 1920 թ. դեկտեմբերի 25-ին Համազանգեզուրյան 1-ին համագումարը որոշեց երկրամասը հռչակել ինքնավար, մինչև քաղաքական հնարավորություն կստեղծվեր կրկին միանալու «իր մայր երկրի՝ Հայաստանի հետ» (Վրացեան 1967, 163)։ Ստեղծվեց Ինքնավար Սյունիքի Հանրապետությունը, որը 1921 թ. ապրիլի 26-ին հրավիրված Համազանգեզուրյան 2-րդ համագումարում վերանվանվանվեց Լեռնահայաստանի Հանրապետություն (Նժդեհ 2021, 109–111)։

Սյունիք-Լեռնահայաստանը (Ինքնավար Սյունիք և Լեռնահայաստան), թեպետ միջազգային ճանաչում չունեցավ, սակայն, դե ֆակտո լինելով ինքնիշխան հանրապետություն, իր գոյության կարճատև ժամանակահատվածում (1920 թ.

* Ստացվել է 31.01.2025 թ., ուղարկվել է գրախոսության՝ 07.02.2025 թ., ընդունվել է տպագրության՝ 13.08.2025 թ.։

դեկտեմբեր – 1921թ. հուլիս) էական դերակատարում ունեցավ հայոց պատմության մեջ: Լեռնահայաստանի Հանրապետության սահմանները հետագայում հիմք հանդիսացան Խորհրդային Հայաստանի Զանգեզուրի գավառի, իսկ 1991թ. անկախացումից հետո՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի ձևավորման գործում, ուստի ներկա աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում կարևոր նշանակություն ունի այդ սահմանների հստակեցումը:

Թեպետ Զանգեզուրի գոյապայքարի մասին գրվել են մի շարք աշխատություններ, սակայն Լեռնահայաստանի սահմանների խնդրին առանձին անդրադարձ չի կատարվել: Հանրային ընկալումներում Լեռնահայաստանը հաճախ նույնացվում է Սյունիքի մարզի հետ, սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն ընդգրկել է նաև հարակից մի շարք տարածքներ՝ զգալիորեն տարբերվելով թե՛ ներկայիս Սյունիքի, թե՛ նախկին (խորհրդային և ցարական) Զանգեզուրի գավառի սահմաններից:

Սույն աշխատանքում առաջին անգամ փորձ է կատարվել պատմական սկզբնաղբյուրների և գիտական գրականության քննության հիման վրա հստակեցնել Լեռնահայաստանի Հանրապետության սահմանները, ներկայացնել այն տարածքները, որոնք երբևէ ներառվել են վերջինիս կազմում, ինչպես նաև ցույց տալ երկրի գոյության ընթացքում տարածքային փոփոխությունները և դրանց հիմնական պատճառները: Անդրադարձ է կատարվել հանրապետության վարչատարածքային բաժանումներին: Պատմաաշխարհագրական ուսումնասիրությունների հիման վրա խնդրո առարկա ժամանակաշրջանում հիշատակվող մի շարք բնակավայրեր նույնականացվել են ներկայիս բնակավայրերի հետ:

Հետազոտության համար հիմնական սկզբնաղբյուր են հանդիսացել Հայաստանի ազգային արխիվում պահվող փաստաթղթերը, որոնք առնչվում են 1920–1921թթ. Հայաստանում ընթացած ռազմաքաղաքական իրադարձություններին (ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 30, 34; ֆ. 37, ց. 1, գ. 24, թ. 2–3; ֆ. 314, ց. 1, գ. 38, թ. 1–4): Լեռնահայաստանի սահմանների վերաբերյալ կարևոր տեղեկություններ է պարունակում Փետրվարյան ապստամբության շրջանում հրատարակված «Ազատ Հայաստան» թերթը (Ազատ Հայաստան 1921): Առանձնակի կարևորություն ունեն Զորավար Գ. Նժդեհի[1] և Ս. Վրացյանի[2] աշխատությունները (Նժդեհ 1999, 2002, 2006, 2021; Վրացեան 1967, 1993): Հ. Յ. Դաշնակցության պատմության թանգարանում (Երևան) պահպանվում են Փետրվարյան ապստամբության զորահրամանատար և Լեռնահայաստանի Հանրապետության փոխսպարապետ Կուռո Թարխանյանի կողմից 1922թ. Թավրիզում կազմված երկու եզակի քարտեզներ: Դրանք ներկայացնում են ապստամբների կողմից գրավված տարածքները և Զանգեզուրի ճակատի զորքերի դասավորությունը՝ Լեռնահայաստանի անկման նախօրեին (քարտեզ 1; քարտեզ 2): Լեռնահայաստանի պատմության ուսումնասիրման համար մեծ արժեք է ներկայացնում Գ. Նժդեհի առաջարկով և վերջինիս տրամադ-

---

[1] Գ. Նժդեհը եղել է Լեռնահայաստանի Հանրապետության սպարապետը, առաջին վարչապետը և զինվորական ու արտաքին գործերի նախարարը (տես Գէորգեան 1991, 162):

[2] Ս. Վրացյանը 1921թ. հունիսի մեկից մինչև հանրապետության անկումը եղել է Լեռնահայաստանի Հանրապետության վարչապետ (տես Գէորգեան 1991, 164):

րած տեղեկությունների ու փաստաթղթերի հիման վրա Վ. Գէորգեանի կողմից գրված և 1923թ. հրատարակված «Լեռնահայաստանի հերոսամարտը» աշխատությունը (Գէորգեան 1991, 19): Զանգեզուրի գոյապայքարի ամբողջական պատկերը համապարփակ ներկայացրել է պրոֆեսոր Ա. Սիմոնյանը «Զանգեզուրի գոյապայքարը 1917–1921թթ.» մեծարժեք աշխատությունում (Սիմոնյան 2017):

Լեռնահայաստանի Հանրապետության սահմանների խնդիրը

Համազանգեզուրյան 1-ին համագումարի որոշման մեջ նշված է, որ Ինքնավար Սյունիքի սահմաններն են «Զանգեզուրի նախկին սահմանները» (Գէորգեան 1991, 126; Վրացեան 1993, 661; Նժդեհ 2006, 297):

1921թ. ապրիլի 26–27-ի Համազանգեզուրյան 2-րդ համագումարը որոշում է «Ինքնավար լեռնաշխարհ Ազատ Սյունիքը» վերանվանել Լեռնահայաստան, որի մեջ մտնում են Զանգեզուրը, Վայոց ձորը (Դարալագյազ) և Լեռնային Ղարաբաղը (Սիմոնյան 2017, 875; Ջիլֆուղարյան 2008, 8):

Լեռնահայաստանի սահմանների հարցին անդրադարձ է կատարվում նաև Լեռնահայաստանի և Խորհրդային Հայաստանի միջև ընթացող բանակցությունների ժամանակ: Մասնավորապես՝ 1921թ. մայիսի 12-ին Սիսիանի շրջանի Կալաջուղ գյուղում տեղի է ունենում Խորհրդային Հայաստանի և Լեռնահայաստանի լիազոր պատվիրակությունների հանդիպումը (Խուդավերդյան 1988, 165; Սիմոնյան 1998, 72): Առաջին նիստը նախագահող Լեռնահայաստանի կառավարության պատվիրակության անդամ Գ. Տեր-Մինասյանը, անդրադառնալով Լեռնահայաստանի Հանրապետության սահմաններին, նշում է. «Ապրիլի 26-ին Սյունիքը կոչուեց Լեռնահայաստան, որի մեջ մտնում են նաև Վայոց Ձորը (Դարալագեազ) և Լեռնային Ղարաբաղը» (Վրացեան 1967, 236, 239):

1921թ. հուլիսին, Սյունիքը թողնելուց առաջ, Գ. Նժդեհը, անդրադառնալով Լեռնահայաստանի սահմաններին, Հայաստանի Հեղկոմին գրում էր. «...Լեռնահայաստանը պարփակում է իր մեջ ամբողջ Զանգեզուրի գավառը, Լեռնային Ղարաբաղը, Վայոց ձորն ու Գողթանը: Լեռնահայաստանը իբրև մի վարչական միավոր և Հայաստանի անբաժան ինքնավար մասը, ...ենթարկվում է Հայաստանի կենտրոնական կառավարությանը» (Նժդեհ 1999, 166):

Ինչպես տեսնում ենք, Լեռնահայաստանի Հանրապետության սահմանների վերաբերյալ տարբեր տեղերում զգալիորեն իրարից տարբերվող տվյալներ են նշվում: Ըստ Գ. Նժդեհի՝ Լեռնահայաստանի Հանրապետությունը ներառում էր վերոնշյալ չորս երկրամասերը, սակայն պատմագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ռազմաքաղաքական իրադրությունների փոփոխությունների հետևանքով այդ տարածքները հաճախ անցնում էին ձեռքից ձեռք: Լեռնահայաստանի Հանրապետության սահմանները և դրանց փոփոխությունները պարզելու համար հարկավոր է մանրամասն վերլուծել նշված երկրամասերի պատկանելիության հարցը Սյունիք-Լեռնահայաստանի Հանրապետության գոյության շրջանում (1920թ. դեկտեմբեր – 1921թ. հուլիս)՝ ցույց տալով նաև դրանց ընդգրկած տարածքները:

Զանգեզուր

Համազանգեզուրյան 1-ին համագումարի որոշմամբ Ինքնավար Սյունիքի սահմաններ ճանաչվեցին «Զանգեզուրի նախկին սահմանները» (Գէորգեան 1991, 126; Վրացեան 1993, 661; Նժդեհ 2006, 297; Ալեքսանյան 2019, 20)։ Զանգեզուրն աշխարհագրորեն զբաղեցնում էր Զանգեզուրի և Ղարաբաղի լեռնաշղթաների և Արաքս գետի միջև ընկած տարածքը (Լիսիցյան 1969, 13)։ Ռուսական կայսրության Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառը 1917 թ. դրությամբ ուներ շուրջ 7800 քառակուսի կիլոմետր տարածք (Գէորգեան 1991, 19; Սիմոնյան 2017, 44)։ Կենտրոնը Գորիս քաղաքն էր։ Գորիսից բացի (Գորիսի ոստ. տեղ. (ք. Գորիս)) բաժանված էր 5 ոստիկանական տեղամասի՝ I ոստ. տեղ. (գ. Ղարաքիլիսա), 2-րդ ոստ. տեղ. (գ. Տեղ), 3-րդ ոստ. տեղ. (գ. Դոնդարլու), 4-րդ ոստ. տեղ. (գ. Քիշիկլու), 5-րդ ոստ. տեղ. (Կատարի գործարան) (Кавказский календарь 1916, 139; Հայաստանի ազգային ատլաս 2008, 82)։

Զանգեզուրի գավառը ընդգրկում էր այժմյան Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության որոշ տարածքներ, մասնավորապես՝ Քաշաթաղի շրջանը, Շուշիի շրջանի Բերդաձորի ենթաշրջանը և Մեծ Քիրս լեռան հարավարևմտյան ստորոտին գտնվող «Ղուզեյի գյուղերը»՝ Հադրութի շրջանում (Խաչատրյան և ուրշ. 2015, 11–12)։

Համազանգեզուրյան 1-ին համագումարի որոշումով Ինքնավար Սյունիքը բաժանվեց 6 շրջանների՝ բուն Զանգեզուր (Գորիս), Տաթևի ձոր, Ղափան (Կապան), Դարաբասի ձոր, Սիսիան, Գենվազ (Արևիք, Մեղրի) (Վրացեան 1993, 662–663; Սիմոնյան 2017, 783–784)։ Վ. Գէորգեանը ներկայացնում է նշված վեց շրջաններում ներառված հիմնական գյուղերի ցանկը (Գէորգեան 1991, 19–20), ինչի շնորհիվ կարողանում ենք պատկերացում կազմել Զանգեզուրի ներքին վարչատարածքային բաժանման մասին։ Բուն Զանգեզուրի շրջանի կազմում ներառված էին՝ Քարահունջ, Խնձորեսկ, Կոռնձոր, Տեղ, Արավիս (Արավուս[3]), Խնածախ, Բայանդուր (Վաղատուր), Խոզնավար, Քարաշեն, Բոռն (Ակներ), Հին Գորիս (Վերիշեն), Գորիս գյուղ, Մալանջուկ (Մաղանջուղ), Գերու (Ձորաշեն), Ալղուղի-Շեն (Ազատաշեն) և Հալաք (հետագայում միացել է Վաղատուրին, տես Հակոբյան և ուրշ. 1991, 305) հայկական գյուղերը։ Տաթևի շրջանի մեջ էին ներառված՝ Խոտ, Շինուհայր, Հալիձոր, Տանձատափ, Երիցաթումբ (Բարձրավան), Սվարանց, Տաթև և Յայջի (Հարժիս) գյուղերը։ Ղափանի շրջանի կազմում ներառված էին հետևյալ գյուղերը՝ Վերին Խոտանան, Ներքին Խոտանան, Շրդնանց (Շրվենանց), Նորաշենիկ, Առաջաձոր, Խլաթաղ (Ձորաստան), Կավարտ, Բեխ, Բաղաբուրջ, Վաչագան (Վերին Վաչագան), Բարաբաթում (ներկայումս ներառված է Կապան քաղաքի կազմում), Արծվենիկ (Արծվանիկ), Չափնի, Ըրկենանց, Սևաքար, Ջեյվա (Դավիթ-Բեկ), Մողես, Վժենիս (Ուժանիս), Եղավարդ (Եղվարդ), Ագարակ, Խդրանց, Գյուտկում (Գեղանուշ), Ճակատեն, Շիկահող, Ներքին Հանդ, Սրաշեն, Ծավ, Կեմանց և Շիշկերտ։ Դարաբասի շրջանում ընդգրկված էին՝ Լծեն, Դարապաս (Դարբաս), Լոր, Գետաթաղ, Շնաթաղ (Շենաթաղ) գյուղերը։ Սիսիանի շրջանում նե-

[3] Փակագծերում տրված են բնակավայրերի մեր կողմից նույնականացված այժմյան անվանումները։

բառված էին՝ Ուզ (Ույծ), Ղարաքիլիսա (Սիսիան), Ախլաթյան, Տուլորս (Տոլորս), Բնունիս, Աղքեանդ (Աշոտավան), Ալիլլու (Սալվարդ), Բոնակոթ, Թազագեղ (Թասիկ), Բալաք, Մազրա (Մուցք), Շաղատ, Անգեղակոթ, Մուխուրթուլյան (Մուխուրթորյան), Ղալաջուղ (Սպանդարյան), Բարիսովկա (Ծղուկ) և Բազարչայ (Գորայք) գյուղերը: Գենվազի շրջանի (Արևիք) կենտրոնը Մեղրի ավանն էր, որից քիչ հեռու գտնվում էր Կարճևան գյուղը (Գէորգեան 1991, 19–20): Վ. Գէորգեանը չի ներկայացնում Գենվազի շրջանի կազմում ներառված մյուս բնակավայրերի ցանկը, սակայն ըստ էության դրանք հիմնականում համապատասխանում են նախկին Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառի Մեղրիի ոստիկանական շրջանի կազմում ներառված գյուղերին, որոնք հետագայում ներառվեցին Խորհրդային Հայաստանի Մեղրիի գավառի կազմում՝ Լիճք, Շվանիձոր, Տաշտուն, Վանք, Կալեր և այլն (Սուքիասյան 2021, 168):

Արձանագրություններում նշվում է, որ Համազանգեզուրյան 1-ին համագումարին ներկա էին Զանգեզուրի բոլոր շրջանների 69, իսկ 2-րդ համագումարիին՝ 64 գյուղերից ընտրված և ուղարկված պատգամավորներ (Նժդեհ 2002, 212; Նժդեհ 2021, 109): Սակայն Զանգեզուրի գյուղերի թիվն անշուշտ ավելի մեծ էր: Կարելի է ենթադրել, որ ստեղծված ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական բարդ ժամանակաշրջանում, որոշ գյուղեր չեն կարողացել մասնակցել երկրամասի համար մեծ նշանակություն ունեցող նշված երկու համագումարներին:

Այսպիսով, թեպետ հռչակագրում նշվում էր, թե Ինքնավար Սյունիքի սահմաներն են Զանգեզուրի նախկին սահմանները, սակայն սկզբնական շրջանում Ցարական Ռուսաստանի Զանգեզուրի գավառի արևելյան մասը ներառված չէր Ինքնավար Սյունիքի վարչատարածքային բաժանման համակարգում: Այդ շրջանները Գ. Նժդեհի գլխավորած զորքերը կարողացել էին ազատագրել 1920 թ. գարնանը (Ղազարյան 2022, 47–48), սակայն Ինքնավար Սյունիքի հռչակման ժամանակ (1920 թ. դեկտեմբեր) հանրապետության վերահսկողությունը նշված շրջանների վրա չէր տարածվում: Դրա հյուսիսային մասը Ինքնավար Սյունիքի կազմում ներառվեց ավելի ուշ: Մասնավորապես 1921 թ. հունիսին հակառակորդն ուժեր է կենտրոնացնում արևելյան ճակատում՝ Զաբուղի ուղղությամբ Գորիսի դեմ մարտական գործողություններ սկսելու մտադրությամբ (Նժդեհ 1999, 144): Հունիսի 18-ին կարմիրների ուժերը ցրելու նպատակով՝ Գ. Նժդեհը մի փոքր զորամասով անցնում է խորհրդայնացած թուրքական շրջանով: Բարգուշատի[4] թուրքերը, որոնք մեկ տարի գտնվում էին բոլշևիկների իշխանության տակ, Գ. Նժդեհին դիմավորում են «աղ ու հացով և հպատակություն հայտնում», իսկ շրջանի միլիցիական մասերը «խուճապով փախչում են դեպի Խանլըղ (Խանուխ[5] – Գ.Ղ.)» (Նժդեհ 1999, 145): Գ. Նժդեհը հպատակություն հայտնած այդ գյուղերի համար նշանակում է կոմիսար և անցնում Գորիս (Նժդեհ 1999, 145):

---

4 Բարգուշատ (Մյուս Բաղք, Քաշունիք) է կոչվել Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Բաղք գավառի արևելյան մասը (Լիսիցյան 1969, 14; Հակոբյան և ուրշ. 1986, 580):

5 Խանլըղ (Խանուխ) – գյուղ Կովսականի շրջանում, Հագարի գետի ստորին հոսանքի ձախ ափին, Հագարի և Որոտան գետերի գետախառնուրդից մոտ 9 կմ հյուսիս (Հակոբյան և ուրշ. 1988, 649):

Փաստորեն, նախկին Ռուսական կայսրության Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառի մեծագույն մասը ներառվեց Սյունիք-Լեռնահայաստանի կազմում՝ բացառությամբ 2-րդ ոստիկանական տեղամասի (գ. Տեղ) հյուսիս-արևելյան և 3-րդ ոստիկանական տեղամասի (գ. Դոնդարլու) հարավ-արևելյան հատվածների:

Զանգեզուրի խորհրդայնացումից հետո, Խորհրդային Հայաստանի Զանգեզուրի գավառի կազմում ներառվեց նախկին Ռուսական կայսրության Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառի արևմտյան մասը միայն[6], որը Գ. Նժդեհի շնորհիվ մնացել էր հայկական և մաքրվել թուրք-թաթարական հորդաներից (Սուքիասյան 2021, 165):

Լեռնային Ղարաբաղ

Հանրապետության հռչակումից հետո, ռազմաքաղաքական իրադրությունների հետագա փոփոխությունների արդյունքում Ինքնավար Սյունիքը կարողացավ ընդլայնել իր սահմանները՝ դուրս գալով Զանգեզուրի սահմաններից:

Ինքնավար Սյունիքի փաստացի անկախության հանգամանքը ազդեցություն գործեց նաև Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության վրա: Խորհրդային Ադրբեջանի զորքերի ներկայությունը Լեռնային Ղարաբաղում առաջ էր բերել մեծ դժգոհություն, ուստի արցախահայությունը փնտրում էր բարենպաստ հնարավորություն ազատագրվելու համար: Արցախի ազատագրական պայքարը գլխավորում էր նշանավոր պետական-ռազմական գործիչ Թևան Ստեփանյանը, ով գործում էր Գ. Նժդեհի ցուցումներով (Աբրահամյան 2003, 248–249): 1921թ. հունվարի 7-ին Գ. Նժդեհը Ղարաբաղից ստանում է հետևյալ տողերը. «Խնդրում ենք ձեզնից խնայել Ղարաբաղի հայ ժողովուրդին, որն սպասում է ձեզ գիշեր-ցերեկ... Յունվ. 3, 1921թ.» (Նժդեհ 1999, 96): Գ. Նժդեհը չէր կարող անտեսել արցախահայության խնդրանքը, քանզի խորապես մտահոգված էր տարածաշրջանում ընթացող իրադարձություններով[7]: Հունվարի կեսերին, Գ. Նժդեհի հրամանով Ղարաբաղ անցած սյունեցիների զորամասի (հրամանատար՝ Տեր-Պետրոսյան) աջակցությամբ տեղի ապստամբները մի քանի օրվա ընթացքում Դիզակը ամբողջությամբ ազատագրում են բոլշևիկներից (Գէորգեան 1991, 128; Աբրահամյան 1998, 52; Նժդեհ 2002, 143): Խորհրդային զորքերը, կրելով պարտություն, նահանջում են նաև Վարանդայի շրջանում և, քաշվելով դեպի հարավ, ամրանում Հադրութում (Ղազարյան 2022, 53): Շուտով հայերի ձեռքն է անցնում նաև Հադրութն իր շրջակա գյուղերով (Նժդեհ 1999, 96; Գէորգեան 1991, 128): «Մարտի 8-ին Խորհրդային զօրքերը կորցնում են Ղարաբաղում ունեցած իրենց վերջին յենակէտը: Մերոնց ճակատային մի խիզախ գրոհից հանկարծակիի եկած՝ թշնամին խուճապով փախչում է դեպի Ջիբրայիլ, թողնելով հարյուրավոր սպանված, 150 գերի, ռազմամթերք, գնդա-

---

6 Խորհրդային Հայաստանի Զանգեզուրի գավառի ձևավորման մասին մանրամասն տես Սուքիասյան Հ., Խորհրդային Հայաստանի Զանգեզուրի գավառի կազմակերպման պատմությունից (1921թ.) (Սուքիասյան 2021):

7 Գ. Նժդեհի և Արցախի գոյապայքարի մասին մանրամասն տես Ղազարյան Գ., Գարեգին Նժդեհը և Արցախի գոյապայքարը 1920–1921թթ. (Ղազարյան 2022):

ցիրներ, հացի պաշար և այլն: Այսպիսով, Լեռնային Ղարաբաղը թոթափում է սովետական լուծը և միանում Սյունիքին», — գրում է Գ. Նժդեհը (Նժդեհ 1999, 96): Դիզակը, Վարանդան և Խաչենի զգալի մասը անցնում են հայկական կողմի վերահսկողության տակ (Աբրահամյան 1998, 11, 52–53; Բալայան 2011, 232): Այս իրադարձությունների մասին հայոց բանակի բրիտանացի սպա Օլիվեր Բոլդուինը գրում է, որ թեպետ Կարմիր բանակը բռնազավթել էր գրեթե ամբողջ Հայաստանը, սակայն Գ. Նժդեհի առաջնորդությամբ «հարավում գտնվող լեռնային շրջաններ՝ Ղարաբաղն ու Զանգեզուրը անառիկ էին մնացել» (Բոլդուին 2022, 103–105): 1921թ. մարտի 5-ին Քեշիշքենդից (Եղեգնաձոր) Եղիշե Իշխանյանը Գ. Նժդեհին գրում էր. «Դուք գերմարդկային ճիգեր թափելով ազատագրեցիք ամբողջ Զանգեզուր-Ղարաբաղը…» (Գէորգեան 1991, 149): Թեպետ փաստաթղթերում ընդհանրական նշվում է, որ Լեռնահայաստանի մեջ մտնում է նաև Լեռնային Ղարաբաղը (Վրացեան 1967, 236, 239; Ջիլֆուղարյան 2008, 8), սակայն վերջինիս հյուսիսային շրջանների մասին տեղեկություններ մեզ չհաջողվեց գտնել, իսկ հայտարարություններում և աղբյուրներում, որպես Լեռնահայաստանի մաս, նշվում են Դիզակի, Վարանդայի, հազվադեպ նաև Խաչենի շրջանները: Այսպես, 1921թ. մարտի 7-ին Հայրենիքի փրկության կոմիտեի տեղեկատու բյուրոն արտակարգ հաղորդագրությունում նշում էր. «Ստեղծել է ԼեռնաՀայաստան, որի մէջ մտնում են՝ Դարալագեազը, բուն Զանգեզուրը, Սիսեանը, Ղափանը, Գողթանը, Մեղրին և Ղարաբաղը: Մեր ձեռքն է Դիզակը և Վարանդան…» (ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 30): Երկու օր անց՝ 1921թ. մարտի 9-ին «Ազատ Հայաստան» թերթը գրում էր. «Մեր ներկայացուցիչները Զանգեզուրից հաղորդում են, որ կազմվել է ինքնավար Լեռնահայաստան, որի մեջ մտնում են՝ Դարալագյազը, բուն Զանգեզուրը, Սիսիանը, Կապանը, Գողթանը, Մեղրին և Լեռնային Ղարաբաղը (Դիզակ, Վարանդա և Խաչեն): Այդ բոլոր շրջանները արդեն ենթարկվում են հատուկ կառավարության, որն ընտրված է Տաթևի վանքում տեղի ունեցած համագումարում» (Ազատ Հայաստան 1921):

Լեռնային Ղարաբաղի ազատագրված տարածքների աշխարհագրության մասին ստույգ տեղեկություններ է հաղորդում ապստամբության ղեկավար Թևան Ստեփանյանը 1941թ. նոյեմբերին խորհրդային չեկիստների կողմից ձերբակալվելուց հետո՝ հարցաքննության ժամանակ: «…Անընդմեջ կոիվներով գրավեցի Լեռնային Ղարաբաղի Դիզակի և Վարանդայի բոլոր գյուղերը, …իմ ջոկատներով ես հասա Ասկերան, այսինքն՝ Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի Աղդամի շրջանի սահմանին», — նշում է Թևան Ստեփանյանը (Աբրահամյան 1998, 52–53):

Լեռնային Ղարաբաղը Սյունիք-Լեռնահայաստանի կազմում մնում է մինչև 1921թ. ապրիլի կեսերը: Խորհրդային Ադրբեջանը երկրամաս է ուղարկում մեծաքանակ ուժեր: Միաժամանակ արցախահայությունը գտնվում էր հոգեբանական ծանր իրավիճակում: Գ. Նժդեհի հաղորդմամբ Վրաստանի խորհրդայնացումը, ապա խորհրդայի ուժերի կողմից Երևանի վերագրավումը հուսահատեցնում է արցախահայությանը: Ղարաբաղի զանգեզուրյան զորամասի հրամանատար Տեր-Պետրոսյանը 1921թ. ապրիլի 8-ին Գ. Նժդեհին գրում էր. «Ես նույնիսկ կասկածում եմ, որ մենք կարողանանք այստեղից ապահով դուրս գալ», իսկ ապրիլի 12-ի գրությամբ տեղեկացնում. «Կամուրջը քանդված է, հաղորդակցությունը կտրված,

կռիվները սկսված» (Նժդեհ 1999, 96–97)։ Ղարաբաղից տեղեկացնելով հայկական վաշտերի ծանր դրության մասին՝ Գ. Նժդեհից խնդրում են շուտափույթ օգնություն։ Ապրիլի 18-ի գիշերը Սյունիքի ուժերը հրամանատար Գարեգին Ամիրջանյանի ղեկավարությամբ անցնում են Զաբուղը, ճեղքում Կարմիր բանակի պաշարման գիծը՝ հնարավորություն ստեղծելով հայկական վաշտերի համար անկորուստ անցնել Սյունիք (Նժդեհ 1999, 100; Գէորգեան 1991, 154–155)։ Ապրիլի 19-ին հայկական ուժերը (մոտ 700 հոգի) Լեռնային Ղարաբաղում թողնում են վերջին ռազմավարական կետը՝ Խծաբերդ գյուղը, և անցնելով Սյունիք՝ միանում Գ. Նժդեհի ուժերին (Աբրահամյան 1998, 15–16)։

Վայոց ձոր և Նոր Բայազետ

1921 թ. փետրվարին Գ. Նժդեհը ձեռնամուխ է լինում Վայոց ձորի ազատագրմանը, որի նպատակն էր.

1. Երևանի համար դեպի Սյունիք բացել մի դուռ,
2. Վերցրած գերիներով ապահովել խորհրդային բանտերում եղած հայ մտավորականների կյանքը,
3. Հոգեբանորեն հրահրել և հնարավոր դարձնել մի հակաբոլշևիկյան պոռթկում Արարատյան Հայաստանում» (Նժդեհ 2002, 133)։

1921 թ. փետրվարի 16-ին Ինքնավար Սյունիքի զորքերը, արևմտյան ճակատի զորահրամանատար Յապոնի ղեկավարությամբ շարժվում են առաջ և առանց կռվի գրավում են Վայոց ձորը։ Խորհրդային զորքերը դիմադրություն ցույց չեն տալիս, արյուն չի թափվում, գերի է վերցվում «ամբողջ զորամասը» (մոտ 900 հոգի), Վայոց ձորն անցնում է Գ. Նժդեհի զորքերի վերահսկողության տակ (Գէորգեան 1991, 147; Նժդեհ 2002, 133)։ Փետրվարի 27-ին Գ. Նժդեհը գալիս է Քեշիշքենդ (Եղեգնաձոր), որտեղ ժողովուրդը նրան ընդունում է մեծ խանդավառությամբ։ Մարտի 2-ին Քեշիշքենդում հրավիրված Գյուղացիական համագումարը որոշում է Վայոց ձորը միացնել Սյունիքին (ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 24, թ. 2–3)։ Արխիվային փաստաթղթերից մեկում կարդում ենք. «Գյուղացիական համագումարը Դարալագյազը միավորել է հակախորհրդային Զանգեզուրին՝ իր ներկայացուցիչը ուղարկելով Սյունիքի կառավարության մեջ։ Հռչակված է Լեռնային Հայաստան, որի կազմի մեջ են մտնում Զանգեզուրը, Ղարաբաղը, Դարալագյազը (Վայոց ձոր – Գ.Ղ.)» (ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 34)։ Այսպիսով 1921 թ. մարտի սկզբին Ինքնավար Սյունիքի սահմաններն ընդլայնվեցին՝ ներառելով նաև Վայոց ձորն ու Լեռնային Ղարաբաղի մի զգալի մասը։ Փետրվարյան ապստամբության շրջանում Հայրենիքի փրկության կոմիտեն կարողացել էր ազատագրել Երևանը և վերականգնել Հայաստանի Հանրապետությունը, որը հաճախ կոչվում էր Արարատյան Հայաստան կամ Մայր Հայաստան։ Միևնույն ժամանակ, Ինքնավար Սյունիքը, որն արդեն դուրս էր եկել Սյունիքի (նախկին Զանգեզուրի) սահմաններից, սկսեց կոչվել Լեռնային Հայաստան կամ Ինքնավար Լեռնահայաստան։ Այս շրջանից սկսած տարբեր գործիչներին ուղարկած Գ. Նժդեհի գրություններում հաճախ ենք հանդիպում «Լեռնային Հայաստանի սպարապետ՝ Նժդեհ» մակագրությունը (Նժդեհ 2002, 323), իսկ Սյունիքի բնակչությունը անվանվում է «լեռնահայություն»։ Ս. Վրացյանի տողերում

կարդում ենք. «Հայաստանում կատարված փոփոխությունը շատ ուշ է իմացվում Զանգեզուրում: Անկախ Հայաստանի դեպքերից, իր ռազմագիտական սահմաններն ապահովելու նպատակով, փետրվարի 17-ին, զանգեզուրյան հրամանատարությունը, ընդառաջ գնալով ժողովրդի ցանկությանը, գրավում է ամբողջ Դարալագեազը և միացնում ինքնավար Սյունիքին՝ վերջինս վերակոչելով Ինքնավար Լեռնահայաստան: Ինքնավար Լեռնահայաստանին մեծ դեր վիճակվեց խաղալու իր ազատության համար մաքառող ժողովրդի հետագա կյանքում» (Վրացեան 1967, 174): Մարտի 8-ին Ներքին Ախտայից (Հրազդան) Հ. Օհանջանյանը Գ. Նժդեհին գրում էր. «Ստացա նամակդ և իսկույն ուղարկեցի Երևան, իբրև առաջին պաշտոնական կապը Լեռնահայաստանի և Մայր Հայաստանի» (Նժդեհ 2002, 137):

Ինքնավար Սյունիքի հաջողությունները Վայոց ձորում, ինչպես նաև Փետրվարյան ապստամբության բռնկումը համակում է նաև Նոր Բայազետի[8] մի մասին: «Սյունիքի մեր հաջողությունների ազդեցության տակ պոռթկում է և Բասարգեչարը (Վարդենիս – Գ.Ղ.): Այդ շրջանում կանգնած բոլշևիկյան թնդանոթաձիգ գունդը, ապստամբելով խորհրդային իշխանության դեմ, շարժվում է դեպի Նոր Բայազետ քաղաքը և, առանց կռվի, գրավում է վերջինը» — գրում է Գ. Նժդեհը (Նժդեհ 2002, 134): Գ. Նժդեհի կարգադրությամբ, տեղում նոր ջոկատներ կազմակերպելու նպատակով, Նոր Բայազետի շրջան են մեկնում խմբապետներ Մեսրոպը և Գ. Շահինյանը (Նժդեհ 2002, 134; Հարությունյան 2015, 110): Հ. Օհանջանյանի մի գրությունից պարզ է դառնում, որ Մեսրոպն ու Գ. Շահինյանը Նոր Բայազետ էին անցել Գ. Նժդեհի Դարալագյազում գտնվող զինվորներով: 1921 թ. մարտի 7-ին Հ. Օհանջանյանը ուղիղ կապով հաղորդում է Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ Ս. Վրացյանին. «Մարտի 5-ին Մեսրոպը և Շահինյանը Նժդեհի Դարալագյազի զինվորներով մտել են Նոր Բայազետ» (ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 30): Արխիվային փաստաթղթերից մեկում կարդում ենք. «Մարտի 5-ին Նժդեհի դարալագյազյան ջոկատը գրավել է Նոր-Բայազետ քաղաքը, այն մաքրելով բոլշևիկներից» (ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 34): Խմբապետներ Աղաբեկի, Մեսրոպի և Գ. Շահինյանի խնդրանքով շուտով Նոր Բայազետ է անցնում նաև Գ. Նժդեհը 100 հեծյալների խմբով (Նժդեհ 2002, 134–136; Հարությունյան 2015, 114–115): Գ. Նժդեհի Նոր Բայազետ անցնելը մեծ ազդեցություն գործեց Կարմիր բանակի հրամանատարության վրա: Այս առթիվ Ա. Շիրմախերը իր վերադաս Մ. Մոլկոչանովին գրում է. «Նոր Բայազետի տեղամասում հակառակորդը կենտրոնացել է Երանոս-Ղարանլուղում և նպատակ ունի շուտով անցնել հարձակման: Այդ տեղամասը ղեկավարում է լեռնային գայլ Նժդեհը» (Հարությունյան 2015, 114): Մարտի 10-ին Նոր Բայազետի և Գ. Նժդեհի ապստամբական ուժերն անցան հարձակման և վերահսկողության տակ առան Ալեքսանդրովկա (Չկալովկա) գյուղը, սակայն Ելենովկան (Սևան) գրավել հնարավոր չեղավ (Նժդեհ 2002, 138–140; Հարությունյան 2015, 117–118):

Այսպիսով՝ թեպետ Նոր Բայազետի գրավումը հնարավոր եղավ Փետրվար-

---

8 Նոր Բայազետի գավառը տարածվում էր Սևանա լճի առափնյա շրջանում: Հիմնականում համապատասխանում է Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Գեղարքունիք և Սոթք գավառներին, ներկայում՝ ՀՀ Գեղարքունիքի մարզին (Հակոբյան և ուրիշներ 1998, 24):

յան ապստամբության շնորհիվ, սակայն Երանոս-Ղարանլուղում և Նոր Բայազետում մարտնչող զորքերի զգալի մասը Սյունիքից էր, իսկ տեղի զորքերի հրամանատարները ենթարկվում էին Գ. Նժդեհին: «Սյունիքը… գրաւել էր Վայոց Ձորը և իջել Նոր Բայազէտ», — գրում է Գ. Նժդեհը (Նժդեհ 1999, 94): Նոր Բայազետում Գ. Նժդեհի զորքերը կարողացան վերահսկողության տակ վերցնել Սևանա լճի հարավային և արևմտյան ափամերձ տարածքները (քարտեզ 1). Նոր Բայազետ (Գավառ), Ղարանլուղ (Մարտունի) և Բասարգեչար (Վարդենիս): Ինչպես տեսանք Նոր Բայազետի շրջանում հնարավոր եղավ վերահսկողություն հաստատել ընդհուպ մինչև Ալեքսանդրովկա: Կուռո Թարխանյանի կազմած քարտեզից պարզ է դառնում, որ Բասարգեչարի շրջանում Գ. Նժդեհի գլխավորած զորքերի վերահսկողության տակ են անցել Սևանա լճի հարավարևելյան ափամերձ շրջանները՝ ընդհուպ մինչև Կզըլքենդ (Ծափաթաղ) գյուղը (քարտեզ 1):

Նոր Բայազետում երկար հիմնավորվել հնարավոր չեղավ, քանզի տեղի բնակչության մեծ մասն անտարբեր էր, իսկ որոշ հատված անգամ հակառակորդին էր սատարում (Հակոբյան 1948, 83–84; Նժդեհ 2002, 140–141): Մարտական գործողությունների արդյունքում ապստամբական ուժերը սկզբում քաշվում են Երանոս, ապա Ղարանլուղ (Մարտունի) (Հակոբյան 1948, 83–84): Կարևորելով Սելիմի լեռնանցքի (Վարդենյաց լեռնանցք) ռազմավարական նշանակությունը Վայոց ձորի և Սյունիքի համար՝ Գ. Նժդեհը զորքեր է թողնում Ղարանլուղում, նշանակում ղեկավարներ և վերադառնում Վայոց ձոր՝ Նոր Բայազետի ընդհանուր հրամանատարությանը հրահանգելով «ամեն գնով թումբ կանգնել թշնամու առաջխաղացման դեմ դեպի Ղարանլուխ և Սելիմի լեռնանցքը» (Նժդեհ 2002, 141):

Գ. Նժդեհի վկայությամբ՝ Նոր Բայազետի շրջանը Սյունիքի զորքերը թողեցին Երևանի անկումից (ապրիլի 2) յոթ օր հետո, երբ «Արարատյան գաղթականությունն արդեն գտնվում էր Վայոց ձորում և Սիսիանում» (Նժդեհ 2002, 141): Հետևաբար՝ 1921թ. ապրիլի 9-ից, այդ շրջանն արդեն դուրս էր գտնվում Սյունիք-Լեռնահայաստանի զորքերի վերահսկողության սահմաններից: Դեպքերի սրընթաց զարգացման հետևանքով Նոր Բայազետը Սյունիք-Լեռնահայաստանի վարչաքաղաքական համակարգում չներառվեց (Նժդեհ 2002, 480):

Վայոց ձորում Գ. Նժդեհը, Սյունիքի ու Երևանի միջև ճանապարհ բացելու և Երևանի ապստամբական ուժերի հետ կապ հաստատելու համար, հրամայում է Դարալագյազի հրամանատար Յապոնին կապվել Երևանյան զորամասի հետ և ինքը մեկնում է Սյունիք (Նժդեհ 2002, 142): 1921թ. մարտի 25-ին Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ Սիմոն Վրացյանը գրություն է ուղարկում Գ. Նժդեհին և Յապոնին՝ խնդրելով բացել Երևան-Դարալագյազ-Ջանգեզուր գիծը, որը, ըստ նրա հրատապ էր և իրենց համար ուներ կենսական նշանակություն (Նժդեհ 2002, 144; Գէորգեան 1991, 151–152): Յապոնի գլխավորությամբ Սյունիք-Լեռնահայաստանի զորքերը գրավում են Դարալագյազի և Չանախչիի (Ջանգակատուն) միջև ընկած թուրքաբնակ գյուղերը և կապվում Երևանի հետ (Գէորգեան 1991, 152): Այսպիսով, Վայոց ձորի շրջանում Սյունիք-Լեռնահայաստանի ուժերը հասնում են մեծ հաջողության՝ վերահսկողություն հաստատելով ընդհուպ մինչև Չանախչի գյուղ (Նժդեհ 2002, 434, 481):

Երևանում Փետրվարյան ապստամբությունն անհաջող վախճան է ունենում, խորհրդային զորքերը գրավում են մայրաքաղաքը: Ապստամբական ուժերը տեղի են տալիս և խորհրդային իշխանությունների վրեժխնդրությունից խուսափելու համար Երևան-Դարալագյազ ճանապարհով մազապուրծ հասնում Զանգեզուր: Գաղթականության խուճապահար նահանջը դեպի Վայոց ձոր հոգեբանական ծանր ազդեցություն է ունենում շրջանում, ինչի արդյունքում այստեղ գտնվող փոքրաթիվ զանգեզուրյան զորամասերը թողնում են գավառի մեծ մասը և ամրանում Գնդեվազ գյուղում (Սիմոնյան 2017, 863, 866): Սակայն արևմտյան ճակատում իրադրությունը մնում էր անկայուն: Ճակատի հրամանատար նշանակված Կուռոյի ռազմակայանը ապրիլի վերջին արդեն գտնվում էր Սիսիանի տարածքի վերջին գյուղում՝ Բազարչայում (Սիմոնյան 2017, 868): Այսպիսով ապրիլի 9-ից մինչև 15-ը Սյունիքի ուժերը հետ են քաշվում Ղարանլուղի, Բասարգեչարի և Դարալագյազի շրջաններից (Հակոբյան 1948, 88):

1921 թ. հունիսի 1-ին Գ. Նժդեհը փոխսպարապետ Կուռոյին հրամայում է վերագրավել Վայոց ձորը. «Հրամայում եմ Ձեզ տրված մարտական խնդիրը Վայոց Ձորի վերագրավումը, իրագործել ոչ ուշ քան ամսույս 7-ին (հունիսի): …Կռիվները ղեկավարել անձամբ և բոլոր զորամասերի պետերից պահանջել «մեռնել, բայց հաղթել» (Նժդեհ 2002, 373): Կուռոն սակայն ուշացնում է Վայոց ձորի գրավումը՝ հունիսի 7-ի փոխարեն մարտական գործողությունները սկսելով հունիսի 15-ին (Նժդեհ 1999, 143): Լեռնահայաստանի զորքերը, փոխսպարապետ Կուռոյի ղեկավարությամբ, ռազմական գործողություններ են սկսում Վայոց ձորում, որն ավարտվում է փայլուն հաղթանակով (Ղազարյան 2022, 54): Հունիսի 16-ին Կուռոն Գ. Նժդեհին հեռագիր է ուղարկում՝ տեղեկացնելով թշնամու զորամասի ջախջախման, զորքերի անկանոն և սարսափահար նահանջի, վերցված գերիների, զենքերի և ռազմամթերքի մասին (Նժդեհ 1999, 143–144): Հունիսի 17-ին թշնամին կրում է նոր կորուստներ: Վայոց ձորն ամբողջությամբ անցնում է Սյունիքի ուժերի վերահսկողության տակ: Խորհրդային զորքերը նահանջում են Ղարանլուղի և Արարատյան դաշտի ուղղությամբ (Սիմոնյան 2017, 947, 949): Սակայն Վայոց ձորը երկար պահել չհաջողվեց. խորհրդային զորքերը հունիսի 22-ին անցնում են հարձակման (Սիմոնյան 2017, 960): Այստեղ գտնվող Երևանյան զորամասն անսպասելիորեն անցավ հակառակորդի կողմը: Գ. Նժդեհի վկայությամբ, խորհրդային իշխանությունները դասալիք և թշնամի էին հայտարարվել Սյունիք ապաստանած Երևանյան զինվորներին և սպառնացել, թե «Նժդեհի դրոշի տակ մնալու դեպքում բռնագրավել նրանց սեփականությունը և բանտերը լցնել նրանց ծնողներին» (Նժդեհ 1999, 146): Հետագայում, մինչև հուլիսի կեսերը, արդեն նորից Զանգեզուրն անցավ խորհրդային զորքերի վերահսկողության տակ, իսկ Լեռնահայաստանի Հանրապետությունը դադարեց գոյություն ունենալուց: 1921 թ. հունիսի Վայոց ձորի վերագրավումը եղավ Լեռնահայաստանի վերջին տարածքային ձեռքբերումը:

Գողթան

1920 թ. ամռանը Նախիջևանի հետ խորհրդայնացվել էր նաև Գողթան գավառակը (Սիմոնյան 2017, 947, 842): Նույն թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիս-

ներին Գողթանը կարողանում է հետ շպրտել հակառակորդի գրոհները: Նոյեմբերի 4-ին Գողթանի Բիստ գյուղում տեղի է ունենում ժողով, որտեղ որոշվում է օգնություն խնդրել Գ. Նժդեհից: Ռազմաքաղաքական բարդ իրադրությունը հնարավորություն չէր տալիս Գ. Նժդեհին անձամբ օգնության հասնել պատմական Գողթանին (Սիմոնյան 2017, 713–714): Սակայն վերջինս բազմաթիվ անգամ դիմեց Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ խնդրելով օգնել Գողթանին. «…արագացրեք Նախիջևանի գրավումը, եթե չեք ուզում ընդմիշտ կորցրած լինել Գողթանը, գուցե և Նախիջևանը» (Նժդեհ 2002, 315): 1920 թ. վերջին Գողթանից հայկական ուժերի վերահսկողության տակ էր գտնվում միայն 6 գյուղ (Ցղնա, Փառակա, Ռամիս (Ռումիս), Բիստ, Ալահի և Մարվանիս (Մեսրոպավան, Նասրվազ))՝ մոտ 5000 բնակչությամբ (Նախիջևան-Շարուրը 1993, 221; Սիմոնյան 2017, 768):

1921 թ. փետրվարի 4-ին Ռ. Տեր-Մինասյանին հասցեագրված Գ. Նժդեհի նամակը գրված է «Սպարապետ Ինքնավար Սյունիքի և Գողթանի» դրոշմակնիքով (Նժդեհ 2002, 321): Փետրվարի 12-ին բոլշևիկները տեղի թուրք-թաթարական տարրերի հետ հարձակվում են Գողթանի վրա: Գողթանի ինքնապաշտպանական ուժերը կարողանում են Գ. Նժդեհի զինակիցներից Ղազար Քոչարյանի գլխավորությամբ 1921 թ. փետրվարի 13-ին հակահարված տալ թշնամուն՝ ստիպելով նրան նահանջել (Գէորգեան 1991, 128–129): 1921 թ. հունվար-փետրվար ամիսներին գրված մի շարք գրություններում Գ. Նժդեհին դիմում են կամ վերջինս ներկայանում է իբրև «Սպարապետ Ինքնավար Սյունիքի և Գողթանի» (Գէորգեան 1991, 134, 148, 181):

Գողթանը, լինելով մեկուսացված արտաքին աշխարհից և զրկված բավարար սննդամթերքից, ինչպես նաև զենքի և ռազմամթերքի սահմանափակ պաշարներ ունենալով, մեծ դժվարությունների պայմաններում պայքարում էր իր ինքնավարության պահպանման համար: 1921 թ. սկզբին սովն այստեղ հասավ ծայրահեղ աստիճանի: «Գողթանը գործածեց անգամ կատուի և իշու միս», — հիշում է Գ. Նժդեհը (Նժդեհ 1999, 138): Գողթանը, սովամահությունից փրկվելու համար, ընդունում է Երևանի Հեղկոմի առաջարկը. «Հաց կտանք Գողթանին, եթե նա ճանաչի խորհրդային իշխանությունը»: Գողթանը հայտարարվում է խորհրդային (Գէորգեան 1991, 129, Նժդեհ 1999, 140–141):

1921 թ. մարտի վերջերին՝ Վայոց ձորը գրավելուց հետո, Գ. Նժդեհը գրություններ է ուղարկում Գողթանի գյուղեր, բնակչությանը հորդորելով հավատարիմ մնալ հայրենիքի միասնության գաղափարին (Նժդեհ 2002, 432, 434–435): 1921 թ. մարտի 30-ին Գ. Նժդեհը գրություն է ուղարկում Գողթանի խորհրդային իշխանության ներկայացուցիչ Քրիստափոր Տեր-Մկրտչյանին. «Պրն. Քրիստափոր, երբ դեռ Արարատյան Հայաստանը կարմիր սրիկաների ձեռքին էր՝ հասկանալի էր ձեր կատարածը, Գողթանի սովետականացումը, իսկ այսօր, երբ Արարատյան Հայաստանում ժողովուրդն ապստամբությամբ մաքրել է իր երկիրը, ձեր սովետական իշխանություն ճանաչելը, անմիտ լինելուց զատ, դավաճանություն է: Առաջարկում եմ՝

1. Անմիջապես Գողթանը հայտարարել Արարատյան Հանրապետության անբաժանելի մասը:

2. Ձերբակալել դրսեցի սրիկաներին և հանձնել ինձ:
3. Կանոնավորել հայ-թրքական երթևեկություններն ու փոխհարաբերությունները:
4. Մի պատգամավորություն ուղարկել ինձ մոտ, որ որոշ գրություններ ստանալով անցնի Երևան՝ հոգալու Գողթանի կարիքները: Սպարապետ Նժդեհ» (ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 38, թ. 1–4):

Սակայն Փետրվարյան ապստամբության պարտությունը և Երևանի անկումը հնարավորություն չստեղծեցին Գողթանի հարցի լուծման համար:

1921թ. ապրիլին, երբ երևանյան գաղթականությունը ապաստան գտավ Սյունիքում, Գ. Նժդեհը արևմտահայ զորամասի հրամանատար Սմբատ Բորոյանին (Մախլուտո) կարգադրեց անցնել Գողթանի շրջան՝ այն ռազմագիտորեն ամրացնելու և հետագա գործողություններում աջակցություն ցուցաբերելու համար (Նժդեհ 2002, 367): Գ. Նժդեհի Մախլուտոյին ուղղված ապրիլի 23-ի գրությունում կարդում ենք. «…Միօրյա հանգստից հետո (Քաջարանում) Ձեր զորքերը պետք է իջնեն Գողթան…» (Նժդեհ 2002, 327): Սակայն արևմտահայ զինվորականությունը հրաժարվում է կատարել այս հրամանը, որի մասին մայիսի 3-ին Մախլուտոն Լիճք գյուղից տեղեկացնում է Գ. Նժդեհին. «Խորապես ցավում եմ, որ հնարավոր չեղավ մեզ իրագործելու Ձեր հրամանը՝ Ղափուջուղի վրայով դեպի Գողթան: Մոտ 1000 հոգով մեկնեցինք Քաջարան, որտեղից պիտի ճամբա ելնեինք, դժբախտաբար զինվորությունը լեռան առջև, մեկ կողմից անձամբ լսելով տեղացի ազգաբնակչության լեռան և անցքի մասին տված դժվարալուր տեղեկությունները, մյուս կողմից պատճառաբանելով իր հոգնածությունը, մերկ, բոկոտն ու քաղցած վիճակը մերժեց այդ ուղղությամբ շարժվել բանավոր և գրավոր, որոնց օրինակներն և պատճենները կմնան այժմ մեր տրամադրության տակ» (Նժդեհ 2002, 367–368): 1921թ. մայիսին Գողթանի շրջանում մնացած մի քանի հայկական գյուղերի բնակիչներ հայտարարում էին, որ իրենց «ֆիզիկական գոյության պահպանումը և տնտեսական կյանքի շահը պահանջում է լինել Խորհրդային Հայաստանի հետ» (Սիմոնյան 2017, 932):

Եզրակացություն

Այսպիսով, հիմնվելով մեր կողմից իրականացված հետազոտության արդյունքների վրա, կարելի է եզրակացնել, որ Ինքնավար Սյունիք-Լեռնահայաստանը բազմաթիվ անգամ ունեցել է տարածքային ձեռքբերումներ և կորուստներ: Հանրապետության սահմաններն անընդհատ փոփոխվել են վերջինիս գոյության ամբողջ ընթացքում: Հիմքում ունենալով Զանգեզուրը, այն ընդարձակվել է՝ ընդգրկելով հարակից որոշ երկրամասեր, սակայն միաժամանակ նաև ունեցել է տարածքային կորուստներ՝ ռազմաքաղաքական գերլարված իրադարձությունների արդյունքում չկարողանալով որոշ հատվածներում անհրաժեշտ կերպով հաստատվել և պահպանել կայուն վերահսկողություն:

Լեռնահայաստանն իր գոյության ընթացքում կարողացել է հանրապետության սահմաններում ներառել Զանգեզուրը՝ իր 6 շրջաններով՝ բուն Զանգեզուր (Գորիս), Տաթևի ձոր, Ղափան (Կապան), Դարաբասի ձոր, Սիսիան, Գենվազ (Արևիք, Մեղրի), ինչպես նաև Բարգուշատը, Գողթանը՝ իր 6 գյուղերով՝ Ցղնա, Փա-

ռակա, Ռամիս (Ռումիս), Բիստ, Ալահի և Մարվանիս (Մեսրոպավան, Նասրվազ)։ Վայոց ձորը՝ ամբողջությամբ (մինչև Զանախչի (Զանգակատուն)), Լեռնային Ղարաբաղը (Դիզակ, Վարանդա, Խաչեն՝ մասամբ) և Նոր Բայազետը (Նոր Բայազետ՝ մինչև Ալեքսանդրովկա (Չկալովկա), Ղարանլուղ (Մարտունի), Բասարգեչար՝ մինչև Կզըլքենդ (Ծափաթաղ))։ Ընդ որում, պետք է հաշվի առնել, որ վերը ներկայացված են այն տարածքները, որոնք Լեռնահայաստանի Հանրապետության գոյության ընթացքում երբևէ գտնվել են նրա զինված ուժերի փաստացի վերահսկողության ներքո։ Սակայն դրանք երբեք միաժամանակ չեն ընդգրկվել հանրապետության կազմում։ Ստորև ներկայացնում ենք Սյունիք-Լեռնահայաստանի Հանրապետության զինված ուժերի վերահսկողության ներքո գտնված տարածքների ժամանակագրությունը.

Զանգեզուր – 1920 թ. դեկտեմբերի վերջ – 1921 թ. հուլիսի կեսեր
Լեռնային Ղարաբաղ – 1921 թ. հունվարի կեսեր – ապրիլի կեսեր
Վայոց ձոր – 1921 թ. փետրվար – ապրիլի կեսեր, 1921 թ. հունիսի 15 – 22
Նոր Բայազետ – 1921 թ. մարտի 5 – ապրիլի 9
Գողթան – 1920 թ. դեկտեմբերի վերջ – 1921 թ. փետրվարի վերջ

Իրենց առավելագույն ընդգրկմամբ Լեռնահայաստանի Հանրապետության բնական սահմաններն արևմուտքում ձգվում էին Զանգեզուրի լեռնաշղթայով՝ ներառելով Գողթանի հյուսիսային մասում, Զանգեզուրի լեռների արևմտյան լանջերին, Գիլան (Գիլանչայ) և Ցղնա (Դույդուլունչայ) գետերի վերին հոսանքների շրջաններում գտնվող հայկական գյուղերը։ Այնուհետև սահմանն անցնում էր Վայքի (Հայոց ձորի) լեռներով մինչև Զանգակատուն գյուղ, այստեղից Գեղամա լեռներով դեպի հյուսիս-արևելք՝ ընդգրկելով Սևանա լճի արևմտյան, հարավային և հարավարևելյան ափամերձ տարածքները (Ալեքսանդրովկայից (Չկալովկա) մինչև Կզըլքենդ (Ծափաթաղ) գծով)։ Այնուհետև սահմանն անցնում էր Սևանի և Արևելյան Սևանի լեռներով, ձգվում դեպի հարավ՝ անցնելով Սյունիքի բարձրավանդակի կենտրոնական մասերով՝ ներառելով նաև Սև լիճը, հասնում էր Հազարի (Աղավնո) գետի վերին հոսանքի շրջան։ Այնուհետև սահմանը ձգվում էր արևելք՝ անցնելով Բերձորի լեռներով և Կարկառ գետի հովտով, հասնում մինչև Աղդամ (Ակնա)՝ դուրս գալով Դաշտային Արցախ։ Այստեղից սահմանը թեքվում էր դեպի հարավ՝ հասնելով մինչև Վարանդա գետի միջին հոսանքի շրջան, ապա, թեքվելով դեպի արևմուտք, հասնում էր մինչև Ջաբրայիլ (Ջրական)։ Այնուհետև Արցախի լեռների հարավարևմտյան լանջերով ձգվում էր մինչև Որոտան և Հազարի գետերի միախառնման վայրից հյուսիս ընկած Խանլըղ (Խանուխ) գյուղի շրջան, ապա, թեքվելով դեպի հարավ-արևմուտք, Բարգուշատի և Մեղրու լեռների արևելյան ստորոտներով հասնում էր Արաքս գետ։ Հարավում Արաքսի հովտով շարունակվում էր մինչև Զանգեզուրի լեռների հարավային ստորոտները։

Նշված սահմաններն ընդգրկել են մոտ 15 000 քառ. կմ տարածք, ինչը շուրջ 2 անգամ գերազանցում է Ռուսական կայսրության Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառի տարածքը և մոտ 3.33 անգամ՝ ներկայիս ՀՀ Սյունիքի մարզի տարածքը։

Վարդան Գէորգեանն այսպես է ներկայացնում Լեռնահայաստանի սահմանների կարևորությունը Հայաստանի համար. «դէպքերու ճակատագրական դասաւորութեամբ մը վաղուան մեր սերունդը կարմիր կտակ մը ունի ժառանգելիք, ինչ որ քիչ մը ևս պիտի խորացնէ իր խիզախութիւնն ու ապրելու անյողդողդ կամքը: Ու ան պիտի սորվի, թէ առանց Հայկական Լեռնաշխարհի, առանց այսինքն Ղարաբաղի և Զանգեզուրի, չի կրնար խաղաղ ու ապահով ապրիլ Հայկական կառավարութիւն մը ներկայ իր աշխարհագրական սահմաններուն մէջ» (Գէորգեան 1991, 17): Եվ իսկապես, Արցախյան 44-օրյա պատերազմից հետո տարածաշրջանում ստեղծված ռազմաքաղաքական բարդ իրավիճակում Լեռնահայաստանի Հանրապետության սահմանները, որի հիմքը ՀՀ Սյունիքի մարզն է, Հայաստանի Հանրապետության համար ունեն ռազմավարական և աշխարհաքաղաքական կարևոր նշանակություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Արխիվային փաստաթղթեր

ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 38, թ. 1–4:

ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 24, թ. 2–3:

ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 30:

ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 34:

Պարբերական մամուլ

ԱԶԱՏ ՀԱՅԱՍՏԱՆ 1921 – «Ազատ Հայաստան», 1921, 9 մարտի, № 16:

Գրականություն

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ 1998 – Աբրահամյան Հ., *Թևան*, Երևան, 1998:

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ 2003 – Աբրահամյան Հ., *Մարտնչող Արցախը. 1917–2000*,

գիրք Ա, 1917–1923. Երևան, 2003:

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ 2019 – Ալեքսանյան Ա., Գարեգին Նժդեհի քաղաքական իրավական հայացքները, *ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու*, Երևան, 2019, № 2(2), 17–28:

ԲԱԼԱՅԱՆ 2011 – Բալայան Վ., *Արցախի պատմությունը հնադարից մինչև*

մեր օրերը, Երևան, 2011:

ԲՈԼԴՈՒԻՆ 2022 – Բոլդուին Օ., *Վեց բանտարկություն և հեղափոխություն*, Երևան, 2022:

ԳԷՈՐԳԵԱՆ 1991 – Գէորգեան Վ., *Լեռնահայաստանի հերոսամարտը*, Երևան, 1991:

ԶԻԼՖՈՒՂԱՐՅԱՆ 2008 – Զիլֆուղարյան Մ., *Լեռնահայաստանի Հանրապետությունը. Սյունիքի սահմանադրությունը*, Գորիս, 2008:

ԼԻՍԻՑՅԱՆ 1969 – Լիսիցյան Ս., *Զանգեզուրի հայերը*, Երևան, 1969:

ԽԱՉԱՏՐՅԱՆ և ՈՒՐԻՇՆԵՐ 2015 – Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բաղալյան Գ., *Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ–ի տարածքային կորուստները 1920–1930–ական թվականներին*, Երևան, 2015:

ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ 1988 – Խուդավերդյան Բ., *Զանգեզուր*, Երևան, 1988:

ՀԱԿՈԲՅԱՆ 1948 – Հակոբյան Ա., *Քաղաքացիական կոիվները Հայաստանում 1921 թվականին*, Երևան, 1948:

ՀԱԿՈԲՅԱՆ ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐ 1986 – Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 1, Երևան, 1986:

ՀԱԿՈԲՅԱՆ ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐ 1988 – Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 2, Երևան, 1988:

ՀԱԿՈԲՅԱՆ ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐ 1991 – Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 3, Երևան, 1991:

ՀԱԿՈԲՅԱՆ ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐ 1998 – Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 4, Երևան, 1998:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՏԼԱՍ 2008 – *Հայաստանի ազգային ատլաս*, մաս Բ (պատասխ. խմբ. Բ. Հարությունյան), Երևան, 2008:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 2015 – Հարությունյան Հ., Նոր Բայազետի Գավառը 1921թ. Փետրվարյան ապստամբության ընթացքում, *Լրաբեր հասարակական գիտությունների*, Երևան, 2015, № 2(2), 104–123:

ՂԱԶԱՐՅԱՆ 2022 – Ղազարյան Գ., Գարեգին Նժդեհը և Արցախի գոյապայքարը 1920-1921թթ., *Աշխատություններ Հայաստանի պատմության թանգարանի*, Երևան, 2022, №2(10), 46–57:

ՆԱԽԻՋԵՎԱՆ-ՇԱՐՈՒՐԸ 1993 – Նախիջևան-Շարուրը 1918–1921 թթ: Փաստաթղթեր և նյութեր, *Բանբեր Հայաստանի արխիվների*, Երևան, 1993, թիվ 1–2:

ՆԺԴԵՀ 1999 – Գարեգին Նժդեհ, *Ազատ Սյունիք*, Պէյրութ, 1999:

ՆԺԴԵՀ 2002 – Գարեգին Նժդեհ, *Երկեր*, հ. 2, Երևան, 2002:

ՆԺԴԵՀ 2006 – Գարեգին Նժդեհ, *Հայրենատիր*, Երևան, 2006:

ՆԺԴԵՀ 2021 – Գարեգին Նժդեհ, *Իմ պատասխանը*, Երևան, 2021:

ՍԻՄՈՆՅԱՆ 1998 – Սիմոնյան Ա., Խորհրդային Հայաստանի և Լեռնահայաստանի կառավարությունների ներկայացուցիչների Սիսիանի բանակցությունները (1921թ. մայիս), *Լրաբեր հասարակական գիտությունների*, Երևան, 1998, №2(2), 69–79:

ՍԻՄՈՆՅԱՆ 2017 – Սիմոնյան Ա., *Զանգեզուրի գոյամարտը 1917–1921թթ.*, Երևան, 2017:

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ 2021 – Սուքիասյան Հ., Խորհրդային Հայաստանի Զանգեզուրի գավառի կազմակերպման պատմությունից (1921թ.), *Հայոց պատմության հարցեր*, Երևան, 2021, № 1 (22), 158–170:

ՎՐԱՑԵԱՆ 1967 – Վրացեան Ս., *Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ*, հ. Զ, Բէյրութ, 1967:

ՎՐԱՑՅԱՆ 1993 – Վրացյան Ս., *Հայաստանի Հանրապետություն*, Երևան, 1993:

КАВКАЗСКИЙ КАЛЕНДАРЬ 1916 - *Кавказский календарь на 1917 г.*, Тифлис, 1916.

Gor Ghazaryan

Yerevan State University

gor.ghazaryan1998@gmail.com

THE BORDERS OF THE REPUBLIC OF MOUNTAINOUS ARMENIA

Keywords: Republic of Mountainous Armenia, Syunik, Zangezur, Artsakh, Vayots Dzor, Nor Bayazet, Goghtan, Garegin Nzhdeh.

In December 1920, following the forced Sovietization of Armenia, Zangezur refused to accept the newly imposed situation, considering it the result of a conspiracy between Kemalist Turkey and Soviet Russia. On December 25, 1920, the First Pan-Zangezur Congress declared the region autonomous until political conditions would allow it to reunite with "its motherland, Armenia." Thus, the Autonomous Republic of Syunik was estab-

lished, which was renamed the Republic of Mountainous Armenia at the Second Pan-Zangezur Congress held on April 26, 1921.

The Syunik-Mountainous Armenia Republic (Autonomous Syunik and Mountainous Armenia), although not internationally recognized, played a significant role in Armenian history during its short existence (December 1920 – July 1921). The borders of the Republic of Mountainous Armenia later became the foundation for the Zangezur District of Soviet Armenia and, following independence in 1991, for the Syunik Province of the Republic of Armenia. Therefore, the clarification of these borders is of critical importance in the context of current geopolitical developments.

For the first time, this study attempts to clarify the borders of the Republic of Mountainous Armenia based on historical primary sources and academic literature. It also aims to identify the territories that were ever included within its composition and to examine the territorial changes during its existence, along with the primary causes behind them. The study additionally addresses the administrative divisions of the Republic and, based on historical-geographical analyses, identifies several settlements mentioned during the period under review with their corresponding present-day locations.

Гор Казарян

Ереванский государственный университет

gor.ghazaryan1998@gmail.com

ГРАНИЦЫ РЕСПУБЛИКИ ГОРНОЙ АРМЕНИИ

Ключевые слова: Республика Горная Армения, Сюник, Зангезур, Арцах, Вайоц Дзор, Нор-Баязет, Гохтан, Гарегин Нжде.

В декабре 1920 года, после вынужденной советизации Армении, Зангезур отказался признать сложившуюся ситуацию, считая ее результатом заговора Кемалистской Турции и Советской России. 25 декабря 1920 года на Первом Все-Зангезурском съезде регион был объявлен автономным до появления политической возможности вновь объединиться с «Материнской страной — Арменией». Таким образом, была создана Автономная Республика Сюник, которая на Втором Все-Зангезурском съезде 26 апреля 1921 года была переименована в Республику Горная Армения.

Республика Сюник-Горная Армения (Автономный Сюник и Горная Армения), хотя и не получила международного признания, сыграла значительную роль в истории армянского народа в период своего кратковременного существования (декабрь 1920 года — июль 1921 года). Границы Республики Горная Армения впоследствии стали основой для формирования Зангезурского уезда Советской Армении, а после обретения независимости в 1991 году — для Сюникской области Республики Армения. Таким образом, уточнение этих границ имеет важное значение в контексте современных геополитических процессов.

В настоящем исследовании предпринята первая попытка уточнить границы Республики Горная Армения на основе исторических первоисточников и научной литературы. Цель исследования — определить территории, которые когда-либо входили в состав этой республики, а также выявить изменения в границах за время ее существования и основные причины этих изменений. Кроме того, в работе рассмотрены административно-территориальные деления республики, а также на основе историко-географического анализа проведена идентификация ряда населенных пунктов, упоминаемых в исследуемый период, с их современными аналогами.